«ԱՐՄԵՆԻԱ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ

(հրատարակության 125-ամյակի առթիվ)

ԱԼՈՅԱՆ Լ. Ա.

Օսմանյան կայսրությունը XIX դ. երկրորդ կեսին քայքայված ու սոցիալ-քաղաքական ճգնաժամի պատճառով բզկտված մի երկիր էր՝ տարածքով մեծ, ռազմաֆեոդալական տերություն: Այս հետամնաց երկրի 28 միլիոն բնակչությունից 24 միլիոնը զբաղված էր գյուղատնտեսությամբ: Թուրք ազգը պատրաստ չէր կուլտուրական առաջընթացի, և այն ժողովուրդները, որոնք պատմության հանգամանքների բերումով հայտնվել էին թուրքերի գերիշխանության տակ, դատապարտված էին ապրելու մտավոր, բարոյական ու սոցիալ-տնտեսական դժվարին պայմաններում: Հարկերի հավաքման անօրեն ու կամայական եղանակներ, պաշտոնական օղակներում կատարվող գողություններ, կաշառակերություն, անօրինականություններ, արդարության լիակատար բացակայություն, անկարգություններ կառավարության բոլոր օղակներում՝ ահա թուրքերի իրական նկարագիրը:

Դրությունը լուրջ էր նաև Ռուսահայաստանում: Ալեքսանդր Երկրորդի սպանությունից հետո գահ բարձրացած Ալեքսանդր Երրորդը սկսում է խավար ու հետադիմական կառավարման իր շրջանը, որը հոգեհարազատ էր համիդյան ռեժիմին: Ցարն այլևս հետամուտ չէր Թուրքիայի կործանմանը, այլ ընդհակառակը, ձգտում էր բարեկամանալ թուրքերի հետ, իր պաշտպանության տակ առնել նրանց շահերը: Ցարական իշխանությունները 1880-ականի սկզբից թշնամական դիրք բռնեցին հայության ազգային ինքնորոշման ձգտումների նկատմամբ: Հայկական հարցը մի տևական ժամանակ դուրս մնաց ռուսական քաղաքական օրակարգից: Մինչդեռ, առանց Ռուսաստանի համաձայնության, Հայկական հարցը դրական լուծում ստանալ չէր կարող: Անհուսալի այս դրությունն էլ հայ մտավորականներին ստիպեց գնալու ազգային-ազատագրական պայքարի ուղիով: Հեղափոխական խմբեր ստեղծվեցին ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ բազմաթիվ հայաշատ կենտրոններում:

Անդրկովկասում հեղափոխական խմբակների երևալը, որոնց նպատակն էր ազատագրել Թուրքիայի հպատակության տակ ապրող իրենց եղբայրներին, ցարական իշխանությունների կողմից սվիններով ընդունվեց: Նրանք վախենում էին ապագա միասնական Հայաստանի ստեղծման գաղափարից: Ցարական ռեակցիայի պայման-ներում սոցիալական ու ազգային հակասություններն Անդրկովկասում և Հայաստանում ծայր աստիճան սրված էին: Ուժեղանում էր գրաքննությունը, փակվում էին հայկական դպրոցներն ու մամուլի առաջադեմ օրգանները: Հետապնդվում ու բանտ էին նետվում ազգային-ազատագրական պայքարի կոչողները: «Ազգային ինքնագիտակցության արթնացումը և ազգային կյանքի աշխուժացումը չէին կարող չանհանգստացնել ռուսական ինքնակալությանը, որ ձգտում

էր տեղական ժողովրդին պահել մշտապես հնազանդ ու հետամնաց վիճակում: Հատկապես 19-րդ դարի 80-ականներին ցարիզմն անցավ բացահայտ ռուսիֆիկացիայի քաղաքականության: Հալածանքներ սկսվեցին հատկապես հայ ժողովրդի դեմ, որովհետև այդ շրջանում Արևմտահայաստանում ծայր առած հայկական ազգային-ազատագրական շարժումները հանդիպում էին կովկասահայության ջերմ պաշտպանությանն ու օժանդակությանը»[1]:

Միևնույն դրությունն էր նաև Արևմտյան Հայաստանում, որտեղ հայկական շրջաններում ստեղծվում էին ընդհատակյա ընկերություններ, ինքնապաշտպանական կոմիտեներ: Ճնշված հայ ժողովուրդը վարչակարգի դեմ ըմբոստանում էր ոչ միայն զենքով, այլ նաև գաղափարական պայքարի միջոցով:

1880-ականին պարզ դարձավ, որ հայ ազգի միավորման ու միասնականության հարցը չի լուծվելու: Ավելին, սուլթանն ինքն էր միայնակ «լուծում» այդ հարցը՝ հայ ազգի բնաջնջմամբ: Ահա ինչու ձևավորվեց հայկական ազգային, հեղափոխական գաղափարախոսությունը: Վան-Վասպուրականում, առաջինը Արևմտյան Հայաստանում ստեղծվեցին կամավորական ջոկատներ:

Եվ չնայած ռուսական ցարի հայատյաց քաղաքականությանը, արևմտահայ նշանավոր գործիչներ Մկրտիչ Խրիմյանը, Խորեն Հովհաննիսյանը և Հայրապետ Խանջյանը 1882 թ. փետրվարի 10-ի մի նամակում, որն ուղղված էր Ալեքսանդր Երրորդին, գրում էին. «Ներկայումս հայ ժողովուրդը գտնվում է կործանման եզրին, քանզի վիճակը ծանր է և հուսահատական: Փոխանակ այն բանի, որ Բեռլինի դաշնագրով, Հայոց հարցին նվիրված 61-րդ հոդվածը վերջ դներ անտանելի հալածանքներին, նոր ճնշումները հաստատում են, որ եթե այսպես շարունակվի, ապա այդ հոդվածը կդառնա մեր կործանման պատճառը»[2]:

Եվ քանի որ սուլթանական ժանդարմերիան խիստ հսկողություն էր սահմանել ընդդիմադիրների նկատմամբ, վերջիններս ստիպված եղան Մկրտիչ Փորթուգալյանին գործուղել Մարսել, որտեղ էլ 1885 թ. լույս տեսավ «Արմենիա» շաբաթաթերթը: Այն ազատ էր բացահայտելու ճշմարտությունը Հայաստանի մասին, հասարակական կարծիք ստեղծելու Եվրոպայում և դրանով իսկ ճնշում գործադրելու միջազգային դիվանագիտության վրա՝ նրան հարկադրելով վերարծարծել Հայկական հարցը: Սա արմենականների խմբակցության ստեղծման հիմնավորումը եղավ, որի անունով էլ կոչվեց արմենականների կուսակցությունը: Նրանք ազգային հեղափոխականության առաջին քարոզիչներն էին, որոնք քարոզում էին զինված պայքար մղել թուրք բռնատիրության դեմ: Բայց ազգային-ազատագրական ուղիների հարցում արմենականները միասնական չէին: Զինված ապստամբության կողմնակիցների կողքին կար նաև մի այլ թև, որը նախընտրում էր ազատական դիվանագիտական ուղին՝

[1] **Ավետիսյան Վ. Ա.,** *Հայ հասարակական մտքի զարգացումը, Ե., 1976, էջ 66-67:*

[2] *Архив внешней политики Российской империи, главный архив, д. 119, л. 50.*

ակնկալելով եվրոպական տերությունների հովանավորությունը: Խումբը պառակտվեց. չափավոր թևն անցավ Լոնդոն, որտեղ հրատարակեց “L’ Armenie“ թերթը՝ ֆրանսերեն և անգլերեն լեզուներով: Նրանց քարոզչությունն արձագանք գտավ հայրենիքում, որտեղ ստեղծվեցին խմբեր ու միություններ, որոնք գործուն մասնակցություն ունեցան ինքնապաշտպանական մի շարք կռիվների ժամանակ: Մեծ էր Արմենականների դերը ազգային քաղաքական կուսակցությունների ձևավորման գործում:

«Արմենիան» տեղեկացնում էր հայ ժողովրդի դեմ թուրք փաշաների, քուրդ բեյերի և սուլթանական կառավարության հալածանքների մասին: Բռնակալներին մերկացնելուց բացի, շաբաթաթերթը միաժամանակ նշում էր հայ գյուղացու պայքարի և ազատության ուղին: Այդ ուղին Մկրտիչ Փորթուգալյանը համարում էր բուլղար ժողովրդի ազատագրական պայքարը, որի ղեկավարների հերոսական պատմության դրվագները բոլոր պատեհ առիթներով ներկայացնում էր հայ ընթերցողներին: Թերթը համոզված էր, որ հայ հեղափոխական բոլոր ուժերը պետք է նվիրվեն բացառապես թուրքահայ ժողովրդի դատի պաշտպանությանը, որովհետև հայության մեծամասնության 2/3-ը Արևմտյան Հայաստանում էր ապրում, որտեղ հայկական հողերի մեծագույն մասն էր:

«19-րդ դարի 80-ական թվականները հայոց բազմադարյան ու արյունաներկ պատմության քառուղիները մտան իբրև նախակուսակցական պայքարի տասնամյակ, որի հորձանուտներում, իբրև այդ շարժման օրգանական շարունակություն, բնականոն ձևով, հերթականությամբ ծնունդ առնելով, հրապարակ իջան ազգային-քաղաքական երեք կուսակցությունները: Սրանք, իրար լրացնելով, շատ դեպքերում իրար հակադրվելով, տարբեր դիրքերից, ամենատարբեր ձևերով ու մեթոդներով գլխավորեցին հայ ժողովրդի ազատագրական, հեղափոխական պայքարը՝ ուղղված օսմանյան բռնատիրության, երբեմն էլ ցարական ինքնակալության դեմ»[3]:

Դարավերջին պանիսլամիստների և պանթուրքիստների սկսած ջարդերի բացահայտ քաղաքականությունը հայկական ազգային-քաղաքական կուսակցություններին հարկադրեց մտահոգվել սեփական ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից փրկելու, զենքին զենքով դիմագրավելու խնդիրներով: Եվ մինչև հնչակյան կուսակցության ստեղծումը կուսակցության առաջնորդ Ավետիս Նազարբեկյանը, որն «Արմենիային» թղթակցում էր Լեռենց կեղծանվամբ, գրում էր, որ Թուրքիայում հայերի ծանր դրությանը վերջ տալու համար «միակ միջոցը հեղափոխությունն է»[4]: Նա քննադատում էր հայրենասերների այն խմբին, որը ելքը տեսնում էր դիվանագիտության մեջ, այն գործիչներին, որոնք կարծում էին, թե պետք է սպասել մինչև մեծ տերությունները գործադրել կտան 61-րդ հոդվածը: Նազարբեկյանը դա համարում էր զառանցանք և հայտարարում, որ

---

[3] **Ղազարյան Հ.,** *Հայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, հ. 1, Ե., 2004, էջ 510:*

[4] *Արմենիա, 1886, N 89:*

հայը այդպիսով արև չի տեսնի: Նա համոզվածէր, որ սպասելը կործանարար է, և «Միայն արյունն է, որ հայ ժողովրդին կփրկի այն ախտից, որով մինչև հիմա նա տանջվում է»[5]: Նրա ամբողջ հույսը աշխարհի տարբեր երկրներում երիտասարդական խմբերի ստեղծումն էր լինելու, որոնք ունենալով իրենց գանձարանները՝ պետք է զենք ձեռք բերեին և միասնաբար պայքարեին հայրենի- քի ազատագրության համար: Նա հայտարարում էր. «Երիտասարդներ, ժամանակը չի սպասում, իսկ Հայաստանում մեր եղբայրների չարչարանքները ստվարանում են, նրանք ավելի ստրկանում են, նրանք խեղդվում են՝ օգնության հասեք նրանց, շտապեք կազմակերպվել»[6]:

Սակայն Փորթուգալյանն ու Նազարբեկյանը նաև տարաձայնություններ ունեին: «Արմենիայի» խմբագիրը չէր ընդունում հնչակյանների ընկերվարական գաղափարները՝ մշակականների նման հայտարարելով, թե նույնիսկ շատ առաջավոր ազգեր դեռևս վեճեր ունեն այդպիսի գաղափարների նկատմամբ, իսկ արևմտահայը նույնիսկ ինքն իրեն կառավարելու իրավունք չունի: Եվ բացի դրանից, հնչյակյանները խոսում են գործարանատերերի և բանվորների վեճերի մասին, մինչդեռ Հայաստանում ոչ գործարան կա, ոչ էլ բանվոր:

Նազարբեկյանն էլ քննադատում էր Փորթուգալյանին ու նրա թերթը՝ հայտարարելով, թե հայերի պայքարը չպետք է սահմանափակվի միայն թուրքական բռնապետության դեմ մարտնչելով. «մեր պայքարը պարզապես ազգային անկախություն ունենալը չէ, այլ պայքարը բոլոր բռնությունների, նաև սեփական շահագործողների դեմ»[7]:

Հնչյակյանների ահաբեկչական գործողությունների դեմ արտահայտվողներից էր նաև «Արմենիան»: Թերթը գրում էր, թե պետք է ձեռնպահ մնալ նոր արյունահեղություններից, լինել խոհեմ, զգոն և լուրջ, անիմաստ զոհաբերությունները կարող են միայն վնաս բերել հայրենիքին: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև քա- ղաքական իրադրությունը, մանավանդ որ հայ գյուղացիությունն անկազմակերպ է, անզեն, պայքարի համար անպատրաստ, իսկ քաղաքային բնակչությունն ընդհանրապես անտարբեր է այս հարցերում: Հետաքրքրքական փաստ էր արձանագրում «Արմենիան»՝ սուլթանի թելադրությամբ Սիմոն բեյը և Հ. Նուրյանը Բերայում հանդիպումներ էին ունենում Աշըգյան Խորեն պատրիարքի հետ և խորհրդակցում «Արմենիան», «Հայաստանը» և «Հնչակը» փակելու մասին[8]: Ավելին, Եվրոպա է գործուղվում վարդապետ Եղիշե Դուրյանը՝ համոզելու իր հայրենակիցներին՝ բոյկոտել ըմբոստ թերթերի խմբագիրներին: Աշըգյանը Դուրյանին ապսպրել էր չքաջալերել հեղափոխական շարժումները, որովհետև համոզված էր, որ այդ շարժումներն ավելի են սրելու թուրք տարրերի ամենավայրենի բռնությունները:

---

[5] *Նույն տեղում:*
[6] *Նույն տեղում:*
[7] *Հնչակ, 1889, N 2:*
[8] *Արմենիա, 1888, N 22:*

Այսօրինակ մի լուր տպագրեց «Արևելքը», որով դատապարտում էր արտասահմանի հայերեն այն հրատարակությունները, որոնք հակասուլթանական քարոզչությամբ էին զբաղվում[9]: Անդրադառնալով այս հրատարակմանը՝ «Արմենիայի» Պոլսի թղթակից Հրուդենը գրում է, թե ճիշտ է, որ Բ. դուռը, իսկապես, մտադիր է մի պաշտոնյա ուղարկել Եվրոպա, պատրիարքի համաձայնությամբ, որպեսզի բանակցի ազատամիտ ու հեղափոխական հայ թերթերի խմբագիրների հետ՝ դադարեցնել տալու այդ հրատարակությունները:

1880-ականի երկրորդ կեսին և հատկապես 1890-ական թվականներին, Համիդի բռնատիրության ծավալմանը զուգընթաց, ավելի խիստ վերահսկողության ենթարկվեցին արևմտահայության սահ-մանադրական մարմինները: Սուլթանի հրահանգներով տարածվումէին երկրի կեղծ ու կարծեցյալ բարգավաճման, հպատակների բա-վարարվածության, անդորրության ու խաղաղության վերաբերյալ սարքովի հանրագրեր, որոնք առանձնապես շատացան 1888- 1889 թթ.[10]: Փորթուգալյանի «Արմենիան» շարունակաբար մերկացնում էր նման կեղծիքները: Թերթը գրում էր. «Վանի թուրք իշխանությունների հրահանգով կազմվել է գոհունակության հանրագիր՝ նախապես խաբելով ժողովրդին»[11]: Իրողությունը բացահայտելուց հետո հուզված ժողովուրդը բողոքում է դրա դեմ՝ ներխուժելով Վանի առաջնորդարան: Ահա ինչու Պոլսի ազգային ժողովը բռնակալության դեմ վերածվել էր պարապ խոսքերի, չնչին ու աննպատակ կրքերի ցուցադրման հավաքատեղիի, որը կապ չուներ ժողովըրդին հուզող խնդիրների հետ:

Օսմանյան լծից ազատվելը բոլոր հայերի երազանքն էր, և գոյության համար պայքարի գաղափարն էլ արտահայտվում էր հայ քաղաքական կուսակցությունների ծրագրերում: Եվ արմենականների նման հնչյակյաններն էլ կարծում էին, թե միայն նոր պատերազմը Թուրքիայի և Ռուսաստանի միջև պետք է լինի ամենահարմար հնա-րավորությունը՝ ոտքի կանգնեցնելու հայ ժողովրդին բռնակալների դեմ: Սակայն հնչյակյանների ահաբեկչական գաղափարախոսությանը արմենականները, ինչպես և «Մշակը», հակադրում էին շրջահայաց մոտեցումը՝ այս կերպ հակառակվելով նաև դաշնակցության գործելակերպին: Այս կապակցությամբ, երբ դաշնակցության և հնչյակյանների ներկայացուցիչները գաղտնի հանդիպումներ էին կազմակերպում երիտթուրքերի առաջնորդների հետ, դեռևս 1892 թ. «Մշակի» խմբագիր Արծրունին, որը մեծ համարում ուներ հայկական երեք կուսակցությունների առաջնորդների շրջանում և համարվում էր այդ կուսակցությունների կայացման կնքահայրը, գրում էր. «Այդ կուսակ-ցությունը (երիտթուրքերի - Ա. Լ.) ձգտում է իբրև թե Եվրոպայի հետ սերտ կապեր կապելով՝ փոխառել արևմտաեվրոպական քաղաքական հաստատությունները և մտցնելով նրանց Թուրքիայի մեջ՝ կենդանացնել նրանցով իր հայրենիքի հնացած,

---

[9] *Արևելք, 8.XII.1888:*

[10] **Սողոմոնյան Գ.,** *Նոր լրագրությունը Պոլսում 19-րդ դարի 80-ականներին, Ե., 2009, էջ 108:*

[11] *Արմենիա, 23.VIII.1887:*

սպառված քաղաքական կազմակերպությունը: Սակայն այդ կուսակցությունը ուրիշ բան չէ, եթե ոչ եվրոպական մտքերով դիմակավորված մահմեդական բուն ֆանատիկոսների մի խումբ, որն ատելով ատում է ամեն բան, ինչ եվրոպական է, ատում է լուսավորություն, քրիստոնեություն և այլն»[12]:

Ի պատիվ «Արմենիայի», պետք է ասել, որ թերթը, հավատարիմ մնալով «Մշակի» գաղափարներին և ռամկավար-ազատական գաղափարախոսությանը, ներկայացրել է գլխավորապես արևմտահայության կյանքը, սուլթանի բռնապետության տակ հեծող հայության ձգտումները, նրա տնտեսական և իրավական կացությունը: Արևմտահայ իրականության լուսաբանումը թերթի հրապարակախոսության մեջ ունի ճանաչողական մեծ արժեք: Թերթը մեծ տեղ է հատկացրել երիտթուրքերի քաղաքականությանը, արևմտահայերի ընդվզումներին, ցեղասպանության, կամավորական ջոկատների գործունեության հանգամանալի լուսաբանմանը:

Ազգի գոյատևման մտահոգություններով լի՝ «Արմենիան» անդրադարձել է հայության համար կործանարար գաղթականության խնդրին: Թերթը ձեռք է բերել համազգային հրատարակության համբավ՝ լուսաբանելով հայ ժողովրդի պատմության, մշակույթի և գրականության համար ընդհանրական նշանակություն ունեցող հիմնահարցեր: Այն հայերի ցավերի արտահայտիչն էր 1894-ի Սասունի ապստամբության, 1895-1896 թթ. հայկական ջարդերի, 1904-ի Սասունի նոր ապստամբության, 1909-ի Ադանայի դեպքերի և, վերջապես, Մեծ եղեռնի ժամանակ:

ЕЖЕНЕДЕЛЬНИК „АРМЕНИЯ“

(к 125-летию издания)

АЛОЯН Л. А.

Резюме

Газета „Армения“ была глашатаем свободомыслия. Во второй половине 1880-х годов в Западной Армении сформировались группы и союзы, активно содействовавшие самообороннительным боям армянского народа.

Идеологическая платформа газеты восходила к идеологемам партии Рамкавар и к идеологической концепции газеты „Мшак“. На страницах газеты издавались материалы, посвященные освободительной борьбе западных армян, геноциду армян в Османской Турции. Газета также выступала с резкой критикой политической линии младотурок.

[12] *Մշակ, 1892, N 86:*